



Լիբանանահայ համայնքին հետ

Գալուստ Կիլպենկեան Հիմնարկության հոգաբարձու մարմինի անդամ Պարոն Մարթին Էսսեան երեկ նամակ մը ուղղեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որուն մէջ արտայայտեց իր հաստատակամութիւնը օժանդակելու լիբանանահայ համայնքին: Պէյրութի նաւահանգիստի սարսափելի պայթումին հետեւանքով անմեղ զոհերուն ընտանիքներուն ցաւակցութիւն եւ կարեկցանք արտայայտելէ ետք, Պարոն Էսսեան աւելցուց. «Մենք Լիբանանի հայ համայնքին կողքին ենք, օգնելու որ իրենց կեանքը վերականգնեն, համայնքային կառոյցներն ու հաստատութիւնները վերակառուցեն: Կը վստահեցնեմ որ պիտի շարունակենք զօրակցիլ հայ համայնքին՝ դիմագրաւելու այս արհաւիրքը»:

Գալուստ Կիլպենկեան Հիմնարկութիւնը երկար տարիներու վրայ օժանդակած է Լիբանանի հայ համայնքին, յատկապէս կրթական ոլորտին մէջ: Վերջերս Հիմնարկութիւնը նաեւ մարդասիրական օգնութիւն դրկեց Լիբանան, որպէսզի համայնքը կարենայ դիմագրաւել համաճարակը եւ տնտեսական տագնապը: Օգոստոս 4-ին տեղի ունեցած նաւահանգիստի պայթումին ի պատասխան, Հիմնարկութեան օժանդակութիւնը հայկական դպրոցներուն նիւթական օգնութեան բնոյթ պիտի կրէ: